



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Մույն աշխատանքն արտոնագրված է «Մտերծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

սպասման է և տարածել նյութը ցանկացած մեդիայով կամ կրիչով
մասիով կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

655
9-36

1932



655

2-36

ՎԱՐՁԱՏՐՈՒԱԾ ԻԶՄԻՐԵԱՆՑ ՍԱՀԱԿ - ՄԵՍՐՈՊ 1912 Ի ՄՐՑԱՆԱԿԱԻ

2-36

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ 1512 - 1932

ՎԱՀԱՆ ԶԱՐԴԱՐԵԱՆ

ՀԱՅ ՎԵՆԵՏԻԿ

Բ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՆ

- | | | |
|--------------------------|----|------------------|
| 1. — ՄԻԻԹԱՐ ԱԲԲԱՀԱՅՐ | 16 | Լուսատիպ պատկեր |
| 2. — ՆԱՀԱՊԵՏ ԱԳՈՒԼԵՑԻ | 13 | » » |
| 3. — Հ. ԱՐՄԷՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ | 6 | » ⁶ » |
| 4. — Հ. ՄԻՔԱՅԷԼ ԶԱՄՉԵԱՆ | | |

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՄԱՏԵՆԱՇԱՐ ԹԻԻ 7

1932

ԳՐԱՏՈՒՆ
ՎԱՀԱՆ ԶԱՐԴԱՐԵԱՆ


655
2-36

Տպագր. ՅԱԿՈՒՔ ՓԱՓԱԶԵԱՆ, 3, Միսան Սուլարէս

Հ Ա Յ Վ Ե Ն Ե Տ Ի Կ

ՄԽԻԹԱՐ ԱԲԲԱՀԱՅՐ

1676 — 1749



30 Մխիթար Աբբահայր Սեբաստացի
(առնուած Մխիթար գրէկն)

31 Յովհաննէս Կողնարոյ
Դուկա Վենետիկոյ

Նշանաւոր դէմք մը, իր հանճարով, յամառ գործունէութեամբ և առապած աւասակ աւասակ չարչարանքներով և հուսկ ուրեմն կարողացած հիմնել Մխիթարեանց Մխարանութիւնը, օգտակար հանգիստնայրով Հայ Ազգին և գրականութեան, ահա այդ դէմքն է Մխիթար Աբբահայր, որ ծը-

նած է Սեբաստիոյ մէջ 1676 Փետրուար 7ին:
Հայրն էր Չէրչի Մանուկենց Մահաեսի Պետրոս, արուեստով փերեզակ:
Հինգ տարեկան էր երբ քահանայէ մը ուսմունք սովրեալ, 10 տարեկանին երկու քոյրերէ դաս տանել

Յիշատակարան 7

Հայ Վենետիկ Բ



721


6944

սկսաւ և 15 տարեկանին Միքայել Եպիսկոպոսի քով սարկաւագ եղաւ և միասին էջմիածին գնաց:


Մխիթար չի կրնալով տոկալ էջմիածնայ վանքին խստամբեր կեանքին հարկադրուեցաւ փախչիլ Սեւանայ կղզին, ուր քիչ ատեն մնալէն ետք անցաւ Բասէնի վանքը ու ուսումնասիրեց ձեռագիրները և Քաղկեդոնի ժողովին վրայ ծանօթութիւններ ըստացաւ. տարիուկէսէն անցաւ Սեբաստիա 1693ին և գնաց Բէրիա, անկէ Հռոմ երթալու համար ելաւ Կիպրոս ուր հիւանդանալով և հարածուելով վերադարձաւ Բէրիա, անտեղէն գնաց Սեբաստիա ուր վարդապետ ձեռնադրուեցաւ 1693 ին Կեսարացի Սահակ եպիսկոպոսէն:



32 Ս. Ղազարի նախկին վիճակը



33 Ս. Ղազար նորոգուած Մխիթար Աբբայի



34 Կղեմէս ԺԱ. Քահանայապետ

Մխիթարի փափաքն էր Միարանութիւն մը հիմնել, վարդապետ ձեռնադրուելէ ետք ունեցաւ քանի մը աշակերտներ իրեն համակիր. անցաւ Պօլիս ուր ջանաց համոզել Խաչատուր աստուածաբան վարդապետը, բայց չյաջողեցաւ: Հոն Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյն մէջ կը քարոզէ և ժողովուրդէն մեծ ընդունելութիւն կը գտնէ իր քարոզները:

Իրեն դէմ հակառակութիւններ տեսնելով, ձգեց Պօլիսը Կարին գնաց, յետոյ նորէն վերադառնալով Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյն մէջ թէ քարոզիչ եղաւ և թէ Միարանութիւն մը հաստատեց: Սակայն Հայոց Պատրիարքը հակառակեցաւ իրեն՝ իր կաթողիկ գաղափարներուն համար, որով Մխիթար ստիպուեցաւ նորէն թողուլ Պօլիսը և երթալ Մետոն բերդաքաղաքը 16 աշակերտներով միասին, առանց դրամի, աղքատ, զրկուած վիճակի մէջ, մինչև որ Կղեմէս ԺԱ. Պապը վաւերացուց իր գործը 1712 ին և կոչուեցաւ Աբբահայր:



1) Երանելի Գրիգոր Բարեպետի անկումը (1680) 2) Երանելի Գրիգոր Բարեպետի անկումը (1680)

Գ Ի Բ Բ Ի Ն Ն Դ Ո Յ
ՈՐ ԲՍԵ ԵՐԵՎԱՆԻՈՅՆ
ԸՍԲ ԲԵՐԵՍԻՔ



Ի ԿՈՐԻՆԹԻ
ԱՐՄԻՆԻ ԳՆԻՐԻՆ ԵՒ
ՉԵՐԿՈՒՄ ԵՐԵՎԱՆԻՈՅՆ

Երանելի Գրիգոր Բարեպետի անկումը... 1) Երանելի Գրիգոր Բարեպետի անկումը... 2) Երանելի Գրիգոր Բարեպետի անկումը... 3) Երանելի Գրիգոր Բարեպետի անկումը... 4) Երանելի Գրիգոր Բարեպետի անկումը... 5) Երանելի Գրիգոր Բարեպետի անկումը... 6) Երանելի Գրիգոր Բարեպետի անկումը... 7) Երանելի Գրիգոր Բարեպետի անկումը... 8) Երանելի Գրիգոր Բարեպետի անկումը... 9) Երանելի Գրիգոր Բարեպետի անկումը... 10) Երանելի Գրիգոր Բարեպետի անկումը...

37 Աստուածաբանացի Գ. Էջր

նի Ս. Սարգիսի տպարան տնուհը կը կրէր:

1715 ին հոգիւ Վենետիկ ոտք կուխած տպեց Ալբերդի Աստուածաբանութիւնը, Պորդուլիի տպարան ին մէջ:

1722 ին Թէոդոսեանց Դէմէարի տպարանին մէջ տպեց Գիրք առաքինութեանց և Մոլութեանց երկու գրքերը:

Յետոյ տպագրեց նաև Մատթէի Մեկնութիւնը, Հայկազեան Բաւարանը և 1733 ին ալ Աստուածաշունչ աստեանը որ իր հրատարակութեանց մէջ առաջին տեղը կը գրաւէ, թէ թարգմանութեան հարազատութեամբ և թէ տպագրական մաքրութեամբ:

Այս մեծ աշխատութիւնը 1735 Նայեմբերին աւարտեցաւ, իր յիշատակարանին մէջ Մխիթար կը գրէ «անկարելի է նկարագրել գրչով թէ՛ որպիսի ջանք, փոյթ, հոգ և աշխատու-



1) Երանելի Գրիգոր Բարեպետի անկումը (1680) 2) Երանելի Գրիգոր Բարեպետի անկումը (1680)

Գ Ի Բ Բ Ի Ն Ն Դ Ո Յ
ՈՐ ԲՍԵ ԵՐԵՎԱՆԻՈՅՆ
ԸՍԲ ԲԵՐԵՍԻՔ



Ի ԿՈՐԻՆԹԻ
ԱՐՄԻՆԻ ԳՆԻՐԻՆ ԵՒ
ՉԵՐԿՈՒՄ ԵՐԵՎԱՆԻՈՅՆ

Երանելի Գրիգոր Բարեպետի անկումը... 1) Երանելի Գրիգոր Բարեպետի անկումը... 2) Երանելի Գրիգոր Բարեպետի անկումը... 3) Երանելի Գրիգոր Բարեպետի անկումը... 4) Երանելի Գրիգոր Բարեպետի անկումը... 5) Երանելի Գրիգոր Բարեպետի անկումը... 6) Երանելի Գրիգոր Բարեպետի անկումը... 7) Երանելի Գրիգոր Բարեպետի անկումը... 8) Երանելի Գրիգոր Բարեպետի անկումը... 9) Երանելի Գրիգոր Բարեպետի անկումը... 10) Երանելի Գրիգոր Բարեպետի անկումը...

38 Աստուածաբանացի Էջ մր

թիւն յանձն առինք կրել Աստուածաշունչի տպագրութեան համար, որպէս զի վրիպակներ չը սպրդին... Վանքին մէջ 6 անձինք որոշած էի, անձ մ'ալ տպարանին մէջ, սրբագրութեանց ուչ զնելու համար և իւրաքանչիւր տպագրութեան թերթ 5 - 6 անձինք աչքէ կ'անցունէին, իսկ թուղթին, պատկերաց, ծաղկագրերուն և գորգերուն համար ծախքը գրեթէ կրկնապատիկ եղաւ: Մտխուց մեծագոյն մասն հղաւ պղնձէ պատկերներուն համար. ոչ միայն անոնց փորագրութեան, այլ և առանձին տպագրութեան համար: Բայց ես բնաւ ծախուց ծանրութեան չհասցեցայ, ալ բաւական է որ ազնիւ և զեղեցիկ պատկերագորդ տպագրութիւն մ'ունենանք Աստուածաշունչը և ասով ազգիս հոգեւոր օգուտ մը և բարի ծառայութիւն մը ըրած ըլլամ»: Ինչպէս կը տեսնեն մեր ընթերցող-

ԲՆԵ ԼՈՒ ԸՆԹԵՐՅՈՂՍ՝

և Յնտարան մտանիս:

Ի վերջում և այսպես Տե ան... Երբ և զերեւոյն և զիւրոյն... Ի վերջում և այսպես Տե ան... Երբ և զերեւոյն և զիւրոյն...

Ի վերջում և այսպես Տե ան... Երբ և զերեւոյն և զիւրոյն... Ի վերջում և այսպես Տե ան... Երբ և զերեւոյն և զիւրոյն...



40 Բենեթիկոս ԺԴ. Քահանայապետ որ գնահատեց Մխիթարի սպած Ասուածաւունչը

3) Ասուածաւունչին Յիւստակարանը

ներ էջերէն՝ որոնք լուսանկարած ենք, մարդու հիացում կը պատճառէ այդ կատարելալ հրատարակումը, որոնց պատկերները պղնձի վրայ քանդակուած, գարգարուած ծաղկենկարներով ճաշակաւոր տպագրութիւն մ'է:

Այս շքեղ հրատարակութիւնը աւարտելէն ետք մասնաւոր փոտազարդ օրինակ մը (թերեւս այլ ներկուած պատկերներով, որոնցմէ մէկ երկու օրինակներ տեսած եմ), ընծայեց նոյն ժամանակի նշանաւոր աստուածաբան և իրաւագէտ Բէնէտիկոս ԺԴ. (1740-1758) Քահանայապետին, որ գնահատելով սոյն աշխատութիւնը 1742 Սեպտ. 22 ին հետեւեալ գիրը գրկած է:

«Միտնելալ Որդւոյդ
«Ողջոյն և օրհնութիւն Առաքելական
«Երէկ ընդունեցանք, Հաւատաւ
«սիրելու ժողովոյն Գերպ. Քարտու-

«դարին ձեռքով, Հայերէն Աստուածաւունչը, արժանաւոր ընծայ մը՝ «որ մեզ շատ հաճելի եղաւ, և որոց «համար մասնաւոր շնորհակալու- «թիւններ կը յայտնենք: Նոյն չափ «շնորհակալ ենք Ձեզ և Ձեր կրօնա- «ւորաց՝ այն առաքելութեանց հա- «մար՝ զորս կընեն այնքան պաշտ- «քեր կերպով: Եւ գրկելով զամենքը «և Ձեր բարի կրօնաւորաց՝ մեր «Առաքելական օրհնութիւնը»

Ունի հրատարակած նաև բազմաթիւ գրքեր:

Կընանք ըսել թէ Մխիթար ոչ միայն գրողն էր լեզուի վերականգնող եղաւ այլ նաև սանձիբոյն աշխարհարար լեզուի:

Շատ երկար պիտի բլբար նկարագրել Մխիթարի կեանքը և մեր «Յիշատակարանի էջերը շատ պզտիկ պիտի գային երբ Հ. Յովհաննէս Թորոսեան 487 էջերու մէջ հազիւ կա-




41 1600ին Վենետիկ այսուամ
Լափներեն գիրք մը.

բողոքած է ներկայացնել Մխիթարը,
այդ ընդարձակ գործէն և ուրիշ աղ-
բիւրներէ օգտուեցանք պատրաստելու
համար սոյն հակիրճ կենսագրականը:

1719 Սպրիլ 27 եօթանասուն և
չորս տարեկան հասակին մէջ Մխիթար
վախճանեցաւ և թողուեցաւ Ս. Դա-
զարու եկեղեցւոյն մէջ, իր գործը տե-
ւական դարձաւ և 1901 ին տօնուեցաւ
երկհարիւրամեայ յարեւանը:

Մինչև ցարդ Վենետիկ առաջնա-
կարգ դիրք կը գրաւէ Հայ գրական-
նութեան մէջ, ու կը մտղթենք որ
երկու Մխարանութիւններն ալ Վենե-
տիկ ու Վիեննա երկար ժամանակներ
պահեն իրենց գոյութիւնը. Հայ ազ-
գի մտաւորական յառաջդիմութեան
համար:



42 Ալոյիս Սեբաստիանոս
Դուխ Վենետիկոյ



43 Բառագիրք Մխիթար Աբբայի Ա. էջ

ԲԱՆՊԻՐԻ ԶԵՅԿԸ
ՉԵՆԵ ԼԵՉՈՒՐ
ՌԵԹԵՆԵԸ ԾԵՐԿՈՒԹ ՆԵՏՈՐՍ

Յորոց յառաջումն որ է տպագրեալս այս, պարունա-
 կեալ գոն յոգնախումն բազմութիւն բառոց անհաշուել
 զրոց, և այլոց երևելի մտանելոց լեզուաբէտ
 գրչապետաց:

Սկսեալ ի սմա մտնալ որովհետ մանրակտիւ բացատրութիւն
 ունից կենդանեաց, ունից, պիտից, շափոց, դրամաց, գոր-
 ծեաց, և այլոց կարգից, և կարակաց:

Ի սկիզբում կարելի է հանդիսել տպագրել, հանուս լիւր բառերն է հար-
 յոց բառի: Եւս բառերը տպագրել ի բնութեան յայնպիսիս, և յայնպիսիս
 ի բնութեան: Ի սկիզբում յարմար է:

Արարեալ ի իմ արաց վարդապետէ. սերաստացւոց
 արքայ հոգե կոչեցելով աշխատակցութիւն աշա.
 կերտաց իւրոց:

Եւ յոգնաբան երկնաբան յայտարարեալ ի սմա անհատներէ
 լին. և ի յոգնաբան մանրակտիւ կենդանեաց:

Ի տպագրութեան և տպագրութեան և տպագրութեան
 1749 թ. Թիֆլիսի:

Ի տպագրութեան և տպագրութեան և տպագրութեան
 1749 թ. Թիֆլիսի:

Ք Ա Է Ն Է Տ Բ Կ
 Ի տպագրութեան և տպագրութեան և տպագրութեան
 Կ Ր Ա Մ Ա Ն Ա Ի Մ Ե Ե Ա Ի Ո Ր Ա Յ:



44 Բառագիրք Մխիթար Աբբայի Բ. էջ

45 Բառագիրք Մխիթար Աբբայի Գ. էջ

ՆԱՀԱՊԵՏ ԱԳՈՒԼԵՑԻ ՈՐԴԻ ԳՈՒԼՆԱԶԱՐԻ
 1629 — 1695

(ՏՊԱՐԱՆ «ՎԵՆԵՏԻԿ» 1687 - 1695)


Ծնած է 1629ին Ագուլիսի մէջ և զուակն է Գուլնազարին:

Ազնիւ ու ազգասէր անձ մը եղած է և երեւելի հանդիսացած ժամանակին իր ազգօգուտ գործունէութեամբ որ կ'սկսի 1653ին:

Ինք երեւելի վաճառական և բարեսէր անձ մըն էր. Ս. Խաչ եկեղեցւոյն շատ սպասներ նուիրած է և Յայամուսուրք մը գրել տուած է Պոլ-

սոյ մէջ 1676ին որուն համար 110 զրչ. ծախսած է (ժամանակին կ'արժէ մօտաւորապէս 500 ֆրանք), պայման դնելով որ, ո՛վ որ ուզէ առնել կամ տպագրել տալ, նշանակուած գնոյն համեմատ եկեղեցւոյ անօթներ պէտք է նուիրել:

Իր ուսումնասիրութիւնը և բարեպաշտութիւնը կը վկայեն իր տպագրել տուած գրքերը որոնք են Դաւանց բուղք (1695), գործակցութեամբ



49 Պարգաբանութեան գրէն նկարներ



51 Պարգաբանութեան գրէն նկարներ

նուիրած է անոր 40 ոսկի Վենետիկեան և իր հոգւոյն համար ալ կը պատուիրէ քիչ օրւան մէջ երկու հազար պատարագ ընել աւել որուն համար 500 տուքադ թողած է:

Ընդհանուր ժառանգորդ կը կարգէ իր թուները քերեթիղայ և փեսան Առաքել՝ սրգւոյ Թեոսալիայ Ագուլեցւոյ:


Թէեւ կը փափագէր Ս. Խաչ եկեղեցւոյն մէջ թաղուիլ, որուն կը կտակէ 200 տուքաթ և իր սպասաւորին 250 տուքաթ. բայց յայտնի չէ թէ ինչո՞ւ Հայոց եկեղե ին չէ թաղուած ալ մտը Ս. Յուլիանոս Լատինաց եկեղեցին գտա տապանի մը մէջ:

Իր ունեցած գոյքերը կը գտնուէին Պոլիս, Զմիւռնիս, Հոլանտս և Լիվուսայ:

Մեռած է 1695 Յունիար 1ին չրգողութենէ:




50 Պարգաբանութեան գրէն նկարներ



Վերջին քաղաքը ամ գոյն, կեսա թո է սկու թըդ ի յան խոնե ից. իսկ մարդ իբրև ծաղիկ և բոյս գուլարից, անդադր կենը ըն յանտի սարդիչ:

52 Պարզաբանութեան գրէն նկարներ



Երբ ինչ նեղութիւն յուսացանք, ինչպէս զայս քաղաքը մտնուցայ, զին նախք Տաղմուսի խոցեցայ յայսմանցն որ վայրի ուր զնդ խոցեցայ:

54 Պարզաբանութեան գրէն նկարներ

Պարզաբանութիւն Սաղմոսացի (1687) սկիզբը հետեւեալ ոտանաւորը գրած է:

Ես Նահապէս նուազս հոգի
 Որ եմ որդի Գուլնազարի
 Գեղջիւ բրնիկ Ագուլեցի
 Զոսանաւորս շարադրեցի
 Ի նախերգունս Սեկնչի
 Բուն Սաղմոսին Մեծին Դաւթի
 Զոր փափամամբ յոյժ խնդրեցի
 Եւ օգնութեամբ Տեառնն գտի
 Տեսանելով ի յալ լեզուի
 Յօծարեցայ յայսրմ բանի...
 Աշխատանօք Յովհաննիսի
 Ասամպօլցի վարդապետի...
 Բազում դրամբս վասնեցի
 Ի նեղութեան ժամանակի
 Մինչդեռ ըզսա սպազրեցի
 Եւ ի վախճան իւր հասուցի:



Չար մարդն ի յաշխարհի է ող խոս վայրի որ այսօր է գալար և վաղն գանալի. իսկ արդարեւ որ յորտան իտրն ամենի, Դոնգ են ող բարիս կենընց երկրի:


53 Պարզաբանութեան գրէն նկարներ



55 Պարզաբանութեան գրէն նկարներ

Սոյն գրքին հետաքրքրական մէկ էջը կը կազմէ պատկեր մը որ կը հըրատարակենք. այդ պատկերը կը ներկայացնէ ժամանակին Պատրիարքը և կամ վարդապետ մը որ եկեղեցւոյ ամպիտոնէն կը քորոզէ ժողովուրդի՝ 1637ի Պատրիարքն է Կարապետ Կեսարացի կոչուած քահանայ մը, կամ պատրիարքն ու կամ թէ Յովհաննէս վարդապետն է «Պարզաբանութիւն Սաղմոսաց»ի այս պատկերին մէջ քորոզողը, մեզի այդ պէտք չէ, որքան կարեւոր է այն ատենուան տարազները, մեր նախնայրերը գլուխին թաթոց կը կապէին և նիւսպէ կը հագնէին, միայն թէ իրենց կապած թաթոցը սեւ էր, զանազաներու համար Քրիստոսեան իսրամէն:

Ժամանակը և տարագըր ներկայացնող պատկեր մըն է որով անշուշտ



56 Պարզաբանութեան գրէն նկարներ

մեր ընթերցողները պիտի հետաքրքրուին (տես թիւ 48):

Գալով Պարզաբանութեան ոճին մաս մը կը ներկայացնենք գրուածքէն, որուն մէջ ջանք մը կայ տշխարհաբար և դիւրհասակնալի լիզուով գրելու:

յսինքն, ոչ ոք չկայ որ յիւրում մէկ բարեգործութեան նշան մի ունենայ, եւ մէկ մարդ մի այլ չի՛ գտներ, որ Ասուծոյ կամքն կատարէ, կամ նորա օրինացն եւ պատիրանացն հնազանդիլ կամենայ:

Այսինքն, եւ ասաց թէ այդ ինչ պէս կուրուքիւն է՝, որ այդչափ մարդիկ որ շարութիւն եւ անօրէնութիւն գործելոյ յետեւ են, ամենեւին չի՛ նանայեն եւ չիմանան իւրեանց մոլորութիւն եւ պակասութիւնն:

Լ. րեզանի յերկինս, աստեղք ի լուսինս. քրիստոս ի յառաքելաւ, վարդապետք յեկեղեցին. պատմեն մարդկան զխառս. և զպատիւնն այս:



57 Պարզաբանութեան գրեհն նկարներ

Այսինքն, զիմ ժողովուրդն եւ զիմ ծառային կու հալածէին կու ըսպանանէին եւ հաց ապուրի նման կուլ կուսային, եւ արհամարհելով զբանս մարգարեից ամենեւին չի՛ կամեցան իւրեանց աչքն բանալ եւ նանաչել զիմ որդին միածին յիսուս քրիստոս որ է ասուած նշմարիս, եւ օրհնել եւ գովաբանել զանուն նորա, այլ խորհեցան եւ ասացին ըստ դուկասու, սա է՛ ծանանգն, եկայք ըսպանցումք զսա:

Այսինքն, թողելով ասուածոյ երկիւղըն այնպէս սեղ վախեցան, որ ամենեւին ան եւ երկիւղ չկայր, իբր վախեցան ի կայսերէն հռոմայեցւոց, թէ չի՛ լինի թէ բարկանայ իւրեանն վերայ, վախեցան ի զօրացն հռոմայեցւոց թէ չի՛ գան իւրեանց երկրին եւ ազգին սիրապետեն, ըստ այնմ եթէ թողումք զնա այնպէս, ամենեւին հաւասան ի նա, եւ գայցեն հոռումք, եւ բառնայցեն




Լ'արքայ եւ իր կողմէն ասուած գոյնն, եւ զօրացն հռոմայեց' ինմանէ ինքորենն զի գեղեւ շարագործք զիւր ենք կոխասեն, եւ միշտ ուշադրօք ներդառնեն:

58 Պարզաբանութեան գրեհն նկարներ

զազգս մեր եւ զսեղի. եւ այսպէս իւրեա՞ց մոլորութեան միջումն կորան, զերէ ասուած փառասէր եւ մարդահանոյ մարդկանց ոսկոսանին կու ցրուէ, իբր ուժն եւ կարողութիւն եւ հնարագործութիւն կու ոչնչացնէ եւ կու փշաքրնէ:



Այսինքն, որ ամաչեն եւ ամօթ լինին աշխարհիս վերայ, զերէ ասուած անարգեց արհամարհեց եւ նախասինք արար զիւրեանք ամեն ազգերի միջում:

Գու՛նազարցի նահապետ անջնջի ի կը մնայ պատմութեան մէջ իր մեկեղնասուրբեամբը որ նպաստած է տարբան բռնալով եւ օգտակար գիրքեր հրատարակելով եւ առ այդ բաւական գումար մը ծախսելով:



Հ. ԱՐՄԷՆ Վ. ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

1790 — 1866



60 ————— Հ. Ա. Բագրատունի
Լուսանկար Ապսուլլան Եղբարց Պօլիս

59 ————— Հայր Արսէն Բագրատունի

Հ. Արսէն Բագրատունի ծնած է
պիս 1790 Օգոստոս 21ին:

Ինք զաւակը բարեհամբու գեր-
ատանի մը 1801ին վեներիկ Մխի-
սրեանց վանքը կուգար իբր ուսու-
ղ, հազիւ 11 տարեկան հասակին
ձէջ: Իր ուսանողական շրջանը շատ
չլուն եղաւ և արդէն 20 տարեկա-
քահանայացած էր, ունենալով
անց և գիտութեանց պաշար մը,


Հելլէն և Լատին գրականութեանց հետ:
Չեւորկելով ուսուցչական պաշա-
տին, միանգամայն ոյժ կուտար վանքի
թատրոնին՝ գեղեցիկ թարգմանու-
թիւններով օժանդակ Հայ լեզուն՝ ող-
բերգութեանց շարքով մը, որոնք յե-
տոյ տպագրուեցան:

Հայկական գրչագիրները ուսում-
նասիրելու համար Բարիզ կ'երթայ
ուր կը մնայ 7 ամիս, ուսումնասիրե-
լով 150է աւելի ձեռագրեր:

Բարիզէ վերադարձին Հսոմ կ'եր-

Հոգևոր և արտաքին զարգացումը...
Միջոցով իրենց անհատական կյանքը...
Բնական զորություններով և արտաքին...
Վերջինից իրենց անհատական կյանքը...
Վերջինից իրենց անհատական կյանքը...

Չարագեղությունը և անհարկ...
Կարողությունը և անհարկ...
Չարագեղությունը և անհարկ...
Կարողությունը և անհարկ...
Չարագեղությունը և անհարկ...



64 Հոմերոսի Իլիական Գ. էջ

Կարողացաւ Հայ լեզուի գանձարանը՝
Զարգացելոց Քերականութիւնը հրատարակել:

Հեղինակած է և թարգմանած հետեւեալները. Արուեստ բանական Սոսիէ— Արուեստ ուղիղ խորհելոյ— Նըկարագիրք— Կեսարու յիշատակարան— Հայկ դիւցազն. Հոմերի Իլիական— Ճաշակ Հին և նոր ողբերգութեանց— Պոսիէ Դամբանականք— Մելտոնի կորուստ դրախտին Վերգիլիոսի Մշակականք— Քերականութիւն Զարգացելոց եւն. եւն.


Վախճանած է 1866 Դեկտ. 24 ի ն

63 Հոմերոսի Իլիական Բ. էջ

սէր, իր սեղմ և կորովի ոճով:
Հին Հայերէնը ամբողջութեամբ իւրացուցած էր, այնպէս որ վերականգնանացուց զայն իր նորագիւտ բացատրութիւններով, գիտէր նաեւ Հելլէն և Լատին լեզուները և օգտուելով Ս. Ղազարու ճոխ մատենադարանէն, պրպտելով աչքէ անցնելով բոլոր ձեռագիրները, խնամով վերծանելէն ետք

Հ. ՄԻՔԱՅԷԼ ՎՐԴ. ՉԱՄՉԵԱՆ

1738 — 1823



Միքայէլ Չամչեան ծնած է Պոլսոյ մէջ 1738 Դեկտեմբեր 4ին և զաւակն է Աբրահամ Չամչեանի, որ անուանի ոսկերիչ մըն էր: Պատանին Միքայէլ մտքով յաջողակ ու սրամիտ, Միքայէ Չէլէպի Տիւզեանի ձեռքով արքունի ոսկերչութեան արուեստին մէջ մտաւ,

ուր այնչափ յառաջգիմութիւն ցոյց տուաւ որ Չէլէպին կը խորհէր իրեն փեսայ ընել զինքը:

Միքայէլ սակայն կը փափաքէր եկեղեցական սքեմը հազնիլ ու 23 տարեկան էր երբ ուղեւորուեցաւ Վենետիկ խիթարեան վանքը 1760 թուին

ուր կը գտնուէր նաեւ իր երէց եղ-
բայրը Յակոբոս Վ. Չամչեան:

Միջայէլ՝ Կարապետ Վ. Մարտի-
րոսեանէ ստացաւ իր մտաւորական
պաշարը: 1762 Մարտ 2ին ստացաւ
Աբրահայր Ստեփաննոս, Մելքոնեանէ
վարդապետական գաւազանը և Ղըր-
կուեցաւ Արեւելք, Հալէպէն մինչեւ
Պասրա: Չամչեան հրապարակաւ կը
քարոզէր Կարմեղականաց Լատին կրօ-
նաւորաց եկեղեցւոյն մէջ, Կաթողիկե-
կեղեցւոյ ջատագովականը ընելով ու-
րով շատերը դարձան Հռոմէական ե-
կեղեցւոյ գիրկը: Նոյն ժամանակներն
էր որ 4 հատոր գրքեր պատրաստեց
ընդդէմ Հայոց Յակոբ Պատրիարք Նալ-
եանի գրութեանց ուր կը խօսուէր կարգ
մը դաւանաբանական խնդրոց վրայ:

1773ին մեծ ժանտախտի տառն
երբ բոլոր քահանայները վախճանե-
ցան, ինք անոնց օգնութեան փութաց
մարդասիրաբար, սակայն Լեւոն անուն
մէկը Հռոմայ առջեւ ամբաստանեց
զինքը թէ ժանտախտի տառն թողած
է իր հօտը և քոչուած, ասոր վրայ
1775ին կանչուեցաւ Հռոմ ուր արդա-
րացաւ և ընտրուեցաւ վերակացու
նորընծաներու, պատրաստեց հին հայ-
կարանութեան հեռեղութեամբ Քերա-
կանութիւնը գրաբար լեզուին որ քա-
նի մը դարերէ ի վեր խանգարուած էր:
(այս քերականութիւնը ունեցաւ երեք
տպագրութիւն 1779, 1801 և 1831
թուականներուն):

Ապա կը ձեռնարկէ Հայոց պատ-
մութեան ի սկզբանէ մինչեւ 1780
թուականը, մանրամասն ծանօթու-
թիւններով, միջամուխ ըլլալով բոլոր
Հայ և Օտարազգի պատմագրոց գրու-
թիւններուն, թէեւ տեղ տեղ ժամանա-
կագրական սխալներ և աղաւաղում-
ներ ալ սպրդած են, սակայն, ինք հը-
մուտ ըլլալով Լատին լեզուին, Յունա-

րէնէ թարգմանուած պատմագիր՝ երբ
պրպտեց: Իր ջանքը եղած է միարա-
նել՝ անմիաբան պատմագիրները և
ժամանակագիրները, անանկ որ Յով-
հաննէս իմաստասէր Օձնեցի որ մինչեւ
այն ատեն կաթողիկոսութեան հակառա-
կորդ կը նկատուէր, ինք գուշակած է
թէ հակառակորդ չէ ինչպէս որ վերջը
գտնուած ձեռագրէ մը հաստատուած
է: Այս պատճառաւ թշնամիներ ունե-
ցաւ իր դէմ որով շատ հարստանքնե-
րաւ ենթարկուեցաւ: Իր դաստիարակ-
չական պաշտօնը աւարտելով ճամբոր-
դեց Գերմանիա և Աւստրիա և ժամա-
նակ մը մնաց Հայոց քաղաքը վարա-
տին ամբողջին մէջ և ապա 1790ին
Գանահլուանիոյ Եղիաբէթուպոլսոյ
վանքը ղրկուեցաւ իբր այցելու հովիւ:
Երկրորդ տարին նորէն վերադարձաւ
Վենետիկ ուր ձեռնարկեց գրել Մեկ-
նութիւն Սաղմոսոց Գաւթի, այլ և այլ
մեկնաբան երէ օգտուելով (12 հատոր
տպեալ 1815):

Պոլսոյ մէջ երկար տարիներ մնաց
և վախճանեցաւ 1823 Նոյ. 30ին. թա-
ղուեցաւ Բերայի Հին գերեզմանատունը:

Ֆրանսական բազմահատոր յատուկ
անուանց բառարանի: մէջ տպեալ ի
Բարիզ, կայ իր կենսագրականը, այդ
տեղ գրուած է թէ նայն կենսագրա-
կանը հաւաքուած է Գաղղիոյ Ասիա-
կան ընկե ութիւն Օրագրութեան 4րդ.
տարւոյ տետրակէն:

Իր հեղինակութիւններն՝ Պատմու-
թիւն Հայոց 3 հատոր, — Խրախճան
պատմութիւն Հայոց — Քերականու-
թիւն Հայերէն — Մեկնութիւն Սաղ-
մոսոց (12 հատոր) — Նուագարան
Օրհնութեանց — Սեղան խնկոց —
Պատկեր Տօնիյ Ս. Աստուածածնի —
Հրահանգ Եօթնեկի:

00000
00000



6244
41

Յիշատակարանի յաջորդ 8 — 9 միացեալ պրակները պիտի կտրվեն

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԱԼՊՕՄ ՄԸ

որ պիտի հրատարակուի ի յարգանս

ՊԷՋՃԵԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՄԻՐԱՅԻ

Պետական Մեծ Հայուն եւ Պօլսոյ Ազգ. Հիւանդանոցի Հիմնադրին

մահուան հարիւրամեակին առթիւ (1834 — 1933) Յունվար 15:

Սոյն Յիշատակարան Ալպօմը պիտի պարունակէ 50 ի մօտ նկարներ
Նշանաւոր Ազգայիններու (1500 — 1860) Ամիրայական Շրջանէն
մինչև Ազգ. Սահմանադրութեան Հիմնադրութիւնը:

Յիշատակարանի Ալպօմը Լոյս կը տեսնէ 1933 Յունվար 15 կիրակի օր:
Նոյն օրը՝ Հարիւրամեայ Յորելեանին առթիւ Հայ Գեղ. Միութեան
Սրահին մէջ ժամը 5 ին (կ. ե.) տեղի կ'ունենայ

ՅԻՇԱՏԱԿԻ ՀԱՆԴԵՍ ՄԸ

Ուր բանաստեղծիւններ պիտի ըլլան պանծացնող Պէղծեանի գործունէութիւնը և ուր պիտի ցուցադրուին նաև

ՆԿԱՐՆԵՐԸ ԵՐԵՒԵԼԻ ԵՒ ԱԶՔԱՌՈՒ ՀԱՅԵՐՈՒ, ՊԷՋՃԵԱՆ
ԱՄԻՐԱՅԻ ԳՈՐԾԱԾԱԾ ՏՕՆԱՅՈՅՅԸ և ՀՐՈՎԱՐՏԱԿ ՄԸ ևլն.

Աբրահամեան Եղբայրները պիտի նուազեն:

Պիտի բանաստեղծ «Արև»ի խմբագրապետ Տ. Յ. ՊՈՂՈՍԵԱՆ:

«Յիշատակարան Ալպօմ»ը Լոյս կը տեսնէ գեղարուեստական շքեղ տպագրութեամբ լաւագոյն թուղթով: ԿՐ ՎԱՃԱՌՈՒԻ ՆՈՅՆ ՕՐԸ 5 Ե. Գ. Ի:
Իսկ «Յիշատակարան»ի 10րդ. պրակը պիտի հրատարակուի 1933 Յունվարի վերջը և պիտի պարունակէ ՊԷՋՃԵԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՄԻՐԱՅԻ ընդարձակ կենսագրութիւնը Բազմաթիւ նկարներով:

ՄԵՐ ՎՃԱՐՈՂ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԸ

ՓԱՐԻՉ	Տ. Միսաք Նուպարեան	Տ. Նուպար Գեորգեան
ՊԷՅՐՈՒԹ	Տ. Տիգրան Զաւէն	Մէքր Յակոբ Ս. Հանքեան
ԳԱՀԻՐԷ	Տիկ. Վ. Տրեւց Մարգարեան	Տ. Ս. Ժամկոչեան
	Տ. Ասեփան Եսայեան	Տ. Երուանդ Գազազեան
	Տ. Հրանդ Եկաւեան	Տ. Սահակ Անսօնեան
	Տ. Հայկ ձեռահեան	Տրք. Թորգոմ Նասիպ Եղբարք
	Տ. Սահակ Դերձակեան	ԳՈՒՄԱՐ 3100 Ե. Գ.

Բացուած է «Յիշատակարան Մատենաւար»ի Բ. Հատորի բաժանորդագրութիւնը՝
10 պրակի բաժնեգինն է 20 Ե. Գ. և Արատասահման 30 ֆր., Ամերիկա
1.50 տօրար: Աւաջին Հատորը պիտի վաճառուի 30 Ե. Գ.

Հասցէ՝ VAHAN ZARTARIAN, LIBRAIRE-EDITEUR

18, Rue Tewfik — LE CAIRE (Egypte)

